

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1953 ՅՈՒՆՈՒԱՐ-ՄԱՐՏ Թ. 1-3

	Էջ
ԽՄԲ. - Փառքի ճամբայ	1
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
ԶՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԲԷ Վ. - Ապրոյեան զեր- դասանք	5
ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ ԲԺ. Յ. - Ամանոս եւ կամ Սեաւ ու մթին լեռներ	20
ԵՐԷՅԵԱՆ Մ. - Հայ դրամագիտութեան չափը	24
ՊՈՒՇԼԻԿԵԱՆ Հ. ՅՈՒՍԻԿ. - Մեկնութիւն զը- րոց ժողովողին (Միւլթար Արքաշօր).	25
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. - Նորակերտ Հայ Լուսինեաներ (Հար.)	43
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ. - Քննական դիտողութիւններ Աւետարանի աշխարհ- հարար թարգմանութեան	49
ԳՐԱԿԱՆ (Զերթուածներ)	
ԱԹՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ. - Կոմիտաս Վարդապետ Վերադարձի մէջ	38
ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. - Սրբա՛ որ կը նը- ւաղի	40
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Պիտակալ	40
ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. - Հայ գրեթէ զարբին՝ Ս. Մեսրոպին	41
ԱՐՄԼԱՆԵԱՆ ՎԱՀԱՆ (Պրիսմակ). - Կ'ըզմա- յի որ	41
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. - Լոյս ի լու- սոյ (արձակ)	62
ԼԵԶՈՒԿԱՆ	
ՓԷԶԻԿԵԱՆ Հ. ԵՂԻԱ. - Մի՛ գրէք	64

SOMMAIRE

1953 Janvier-Mars N. 1-3

	PAGE
Réd. - La voie de gloire	1
PHILOLOGIE	
Tcherakian P. Chérubin. - La famille Abro	5
Der Ghazarian Dr. H. - Amanos ou monta- gnes noires	20
Yérétzian M. - Numismatique arménienne .	24
Bushlighian P. Houssig. - Le commentaire de l'Ecclesiaste (par le Vén. Abbé Mekhitar)	25
Hatsouni P. Vardan. - Histoire des nouveaux Lusignans	43
Der Nersessian P. Nersès. - Examen criti- que de la version arménienne moderne de l'Evangile	49
LITTERATURE (Poésies)	
Atmadjian Marie. - Komitas Vardapet à Villejuif	38
Djanachian P. Mesrob. - A mon coeur qui languit	40
Hovhannessian P. Vahan. - Bikfaya (Liban)	40
Der Ghazarian P. Ephrem. - A St. Mesrob inventeur des lettres arméniennes	41
Arslanian Vahan (Prismak). - Je desirais que	41
Hovhannessian P. Vahan. - Lumière de Lu- mière (prose)	62
LINGUISTIQUE	
Paitchikian P. Elie. - Corrections de fautes grammaticales	64

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 - 1953

ՀԺԱ. ՏԱՐԻ



ՅՈՒՆՈՒԱՐ - ՄԱՐՏ

ԹԻԻ 1-3

ՓԱՌՔԻ ԶԱՄԲԱՅ

Ազգերու պատմութեան մէջ երբեմն այնպիսի բացառիկ եւ հոյակապ դէպքեր կը պատահին որ իսկապէս դարեր ու հոգեբանութիւններ կը յեղաշրջեն. դէպքեր՝ որոնք իրենց քափին ու դիւքանքին կնիքը այնքան խոր կը դրոշմեն ցեղերու եւ ազգերու սրտին մէջ որ կարծես երկրորդ բնութիւն մը դառնայ ան՝ նոյնացած, քրքուած իրենց էութեան հետ, առ յաւիտ քրքուած իրենց էութեան միանգամայն կեանքին. որ կը դառնայ միանգամայն կեանքի աղբիւր վսեմ անհատականութեան եւ զօրեղ նկարագրի, մինչեւ դիւցազնական գործեր կատարելու:

Այդպիսիներէն է անկասկած իր գերագանց նկարագրով՝ Վարդանանց հերոսաւարտը մեր ազգին մէջ. մեր փոքր ազգին մարտը մեր ազգին մէջ. մեր փոքր ազգին մէջ մեծ ու վսեմ արարքը, անմահ ու անհամեմատելի իր տեսակին մէջ, որ 15 դարերու հեռաւոր խորութենէն մեզի կու դարերու հեռաւոր խորութեան վրայ եւ պիտի գայ ամէն տարի, միշտ քարոզ ու կենդանի, որ իր երկնային բալասանով մեր արիւնտ սրտերը կ'օծէ, մեզ կը սփռփէ այս տխուր օրերուն, կը ներշնչէ ու կ'ոգեւորէ մեզ, մեզ կը ջերմացնէ անօրինակ խանդավա-

ռութեամբ եւ կը բարձրացնէ մեր հաւատն եւ անհատականութիւնը, բոլոր ցեղերու եւ ազգերու մէջ այն բարձր գիտակցութեամբ ու խորհրդով թէ դիւցազներու ցեղ եմք եւ սուրբերու սերունդ: Ու մեր այդ արքշիւ դիւքանքին մէջ մեր դիւցազները մեզի համար կը բարձրանան, կ'աւանդանան ու մեր գերագոյն սիրոյն եւ պաշտամունքին առարկան կը դառնան:

Այդ ոգեւորութեամբ եւ խորին պաշտամունքով էր որ լեցուած էին մեր նախնիքը հանդէպ մեր դիւցազներուն: Այդպէս կը պատմեն Եղիշէ ու Փարպեցի, այդպէս կ'երգեն Շնորհալի եւ Ալիշան եւ Պատկանան: Դարերու անխախտ հաւատ ուրեմն, որուն մէջ գործ չունին ցնորք եւ երազ. հաւատն է անիկա ամբողջ ժողովուրդի մը, որուն դիմաց ազգութեան հոգիներ միայն երբեմն տարակուսած են մեծ արարքին սրբութեան վրայ եւ պիտի յանդգնուէր փորձած են կապտել դիւցազներու նակտէն լուսապսակը անմահութեան՝ ասկէ երեք դար առաջ:

Անձամօք չէ օտարներուն ալ մեր դիւ-

ցազներու այդ պանծալի արարքը: Եւրոպացի պատմագետները գայն *սպասմաբութիւն* բառով են որակած ու սահմանած:

Եւ իսկապէս ապստամբութիւն էր եւ ըմբոստացում Հայ ժողովրդեան բռնած դիրքը իր վրայ գերիշխող պարսիկ պետութեան դէմ, որուն հաւատարիմ ծառայ եղած էին երբեմն վարդան և իր ընկերները:

Բայց ինչո՞ւ այդ նակատագրական փայլը: -

- Որովհետեւ Յագկերտ մոգերու դժոխային մոլուցքէն տարուած, քազէ եւ իշխանութենէ զրկուած վշտահար ու դառնացած հայոց սրտէն ուզեց բռնաբարել եւ ի սպառ խել ինչ որ դեռ կը մնար նուիրական ու քանկագին, եւ այնպէս ստրկացրնել ու մեղցնել մեր ազգը:

Այդ դժոխային ծրագրին քարգմանն էր եւ պատգամը՝ պարսից պաշտօնական նամակը, որ մահացու քոյն եւ լիրք հեզմանք կը ժայթփէր հայերու աստուածային հաւատքին դէմ եւ հուրի ու սուրի սպառնալիքով կ'ուզէր միանգամայն ուրացում լոյս կրօնէն ու խղիւղի ազատութենէն:

Հայաստանի գերագոյն ժամն էր. ժամը կեանքի եւ մահուան:

Հոն է հայ ժողովուրդը, Արտաշատի մէջ, յանձին Հայ եկեղեցական ու քաղաքական պետերուն. անոնք ամէնքը մէկ սիրտ են եւ մէկ հոգի. նոյն հաւատքին են փարած եւ նոյն գաղափարին: Իրենց ձեռքն է նակատագիրը Հայ ազգին: Անոնք գիտակից են ահաւոր պատասխանատուութեան գոր ունին Աստուծոյ, Հայ ազգին և համօրէն մարդկութեան առջեւ: Իրենց վերին կը կախուի մեր ցեղին նակատագիրը յաւերժական փառքի՝ ուստի եւ փրկութեան, եւ կամ յաւիտեական ամօքի՝ որ չարագոյն է քան ամէն մահ եւ կորուստ:

Բայց ոչ. այնտեղ չկայ դեղեւում, չկայ ընտրութեան հարց:

Հայրապետներու հոգիէն կը խօսին Լու-

սաւորիչներ, Ներսէսներ ու Սահակներ. իշխաններու հոգին խանդավառուած է Մամիկոնեան դիւցազներու՝ մեծն Վասակի, Մուշեղի ու Մանուէլի շունչով: Կրօնքի եւ Հայրենիքի պաշտամունքով ապրած ու մեռած քաջերու հաւատքն ու գաղափարն է իրենց ալ հաւատքն ու գաղափարը: Լոյսի որդիներ եւ անոնք եւ ասոնք, մէկ նամբայ կը մանչնան իրենց եւ իրենց ցեղին համար, փառքի նամբան՝ քէեւ արժէ անիկա արիւն եւ մահ:

Ու գրեցին, երկնքի եւ երկրի առջեւ, ու անսուտ եւ անդրժեշտ երդումով կնքեցին. «Ոչ ոք կրնայ մեզ այս հաւատքէն խախտել, ոչ հրեշտակ եւ ոչ մարդիկ, ոչ սուր, ոչ հուր, ոչ ջուր, եւ ոչ մէկ տեսակ դառն հարուած: Մեր բոլոր ինչքերն ու ստացուածները քու ձեռքդ են, մեր մարմինները քու առջեւդ են, կտարէ՛ք քու կամքիդ համեմատ ինչ որ կ'ուզես... քեզմէ տանջանք՝ եւ մեզմէ յանձնառութիւն. սուրիդ դիմաց՝ պարանոց ունինք. (այսինքն պատրաստ ենք մեռնելու՝ բայց ոչ հրաժարելու մեր խղիւղի ազատութենէն անարգ ու քաջութեամբ): Մենք լաւաւորն չենք քան մեր նախորդները՝ որոնք այս դաւանութեան համար զոհեցին իրենց ինչքերը, ստացուածքն ու մարմինը... բայց դու այս ամէնէն յետոյ ալ բան մի՛ հարցնիր. որովհետեւ մարդու հետ չէ մեր հաւատքի դաշինքը՝ որ տղու պէս խաբուինք. այլ անքակտելիօրէն Աստուծոյ հետ. որմէ անհնարին է որ քակուինք եւ հեռանանք ո՛չ հիմա, եւ ոչ յետոյ, եւ ոչ յաւիտեանս եւ ոչ յաւիտենից յաւիտեանս»:

Կը համարիմ քէ ո՛չ մէկ ազգի պատմութեան մէջ կարելի է հանդիպիլ այսքան վսեմ կեցումով եւ այսքան հզօր պատգամի՝ որ անկասկած հոգեկան անհամեմատ քարճութիւն կ'արտայայտէ. եւ անհունօրէն գոհ ենք եւ երջանիկ որ մեր ցեղինն է այդ հոգեկան քարճութիւնը:

Կարդացին այդ կրակէ տոդերը Պարսից

արքան ու իր աւագանին, եւ ապշեցան, յիմարեցան ու մոլեխանձ գազան դարձան:

Եւ ի՞նչպէս չկատուէին՝ երբ իրենց հրապատակ բուռ մը ժողովուրդի ներկայացուցիչները խոյստ, համարձակ, աննկուն եւ անտեղիտալի՝ արեւմարեւոյտ էին եւ իրենց հրամանը եւ իրենց սպանալիքները:

Ու դիմեցին անոնք, ինչպէս ամէն ամիս եւ անարգ բռնակալները, բիրտ ու ժին, պատերազմով խոնարհեցնելու մեր քաջերն ու մեր ժողովուրդը:

Սխալեցան սակայն կրակի կոյր երկըրպագուները: Արտաշատի ուխտադիրները Շաւարշանի դաշտերուն վրայ ցոյց տուին իրենց պատիւը. ու մնացին հաւատարիմ իրենց հայրերու հաւատքին՝ արիւնի գերագոյն ապացոյցով:

Վարդանանց անլուր քաջութիւնը ամօքահար ըրաւ վատ պարսիկները: Հայեր ինկան՝ ազատութիւնն իրենց հոգւոյն մէջ անբռնաբարելի:

Ու դաւանութիւնը կրօնքին ու խղիւղի ազատութեան արիւնի կտակով անցաւ ամէն հայու սրտին խորը, ու հոն դարձաւ հաւատք, դարձաւ սրբութիւն, դարձաւ հոգեբանութիւն եւ նկարագիր, որով կըրցաւ նա տոկալ 1500 տարիներ ամէն դառնութեան եւ հալածանքի: Դաւանութիւն որ դարձաւ աղբիւր հոյակապ եւ անկորնէլի ամբար քաղաքակրթութեան մը:

Ոչ պարագայական գործ եւ ոչ նակատագրական խաղ մըն էր վարդանանց մարտը: Մեր կարմիր ու սուրբ դիւցազն գիտակից իր սխալի արարքին՝ մարգարէական շունչով յայտարարեց գոռոք թէական շունչով՝ յայնքան մեծ պիտի Յագկերտի առջեւ քէ՛ այնքան մեծ պիտի ըլլար իր գործելիք արարքը - Աւարայրի նահատակութիւնը - որուն համբար պիտի սաւառներ մինչեւ կայսերական դուռը եւ մինչեւ աշխարհի ծայրը՝ յաւերժական ու անքառամ համբարով:

Հարկ կա՞յ հաստատել քէ կատարուած է վարդանի մարգարէութիւնը, որ կը շարունակէ ոգեւորել, կենսաւորել ու նորանոր յաղթանակներու մղել Հայ ազգը՝ ի հեմուկս ամէն դժուարութեան եւ ամէն հալածանքի:

Հայրենի այդ անխորտակելի սրբութիւնն ու ժայռը պիտի ապրի յաւիտէ՝ իր պատմական իրողութեամբ, իր արդար ու պանծալի դատով, արիւնի փաստով եւ հայ նկարագրի իր գերագոյն ցուցանիշով:

Ու պիտի գան բախին ու փշուրին այդ անհաս ու նուիրական քարճութեան դէմ ամէն տեսակ անիմն ու անտեղի յարձակումներ. ծիծաղելի՝ ինչպէս բուռ մը խիւն նետուած ուկիւսնոսին անհունութիւնը խոռովելու:

Յաւալի է ըսել քէ այդ յարձակումները ոչ Յագկերտի պայագատներէն եւ ոչ քըշնամի ցեղի մը պատմագետներէն սկսան, այլ մեր իսկ մէջէն, հայ գրողներէ:

Նիւթապա՞շտ քէ նորասէր - չենք գիտեր - մտքեր առանց պատմական լուրջ փաստերու կը յանդգնին քաղաքագիտական սխալ մը, ուստի եւ ճախողանք մը նկատել վարդանանց բռնած ուղին եւ Աւարայրի դիւցազնամարտը, ուրանալով արժէքը մեր Հայ Հայրենիքին համար կատարուած այն գերագոյն գոհարեւորութիւնը որ հազար անգամ վեհ ու սրբազան կը մնայ Թերմոպիլեանէն:

Այդ դասակարգին ներկայացուցիչ մը՝ Պրն. Հրանդ Բ. Արմէն, որ իր յանդուգն տեսութիւնը հրապարակ նետեց՝ գրական-իմաստասիրական հանդերձանքով ու իբր քէ պատմական ուսումնասիրութեան հանգամանքով իր «Մարգարէ եւ Սպարապետը» (Վասակ եւ Վարդան), ուր կը դատապարտէ Ղեւոնդն ու Վարդանը՝ որպէս անհեռատես, անփառաբան ու վերջապէս պատմաւոր հայ ազգին քշուորութեան, անդին փառքի պատմադրանքի վրայ բարձրացնելով Վասակը՝ որպէս մեծ

2044-60



8661-6.6.

ֆաղափագէտ ու ազգասէր, որուն դէմ իբր քէ անարդար գտնուած է Հայոց պատմութիւնը:

Յայտնի է, նշմարտութիւնը սիրողներ դատապարտեցին իր տեսութիւնը. գլխաւորապէս Անդրանիկ Անդրէասեան (Նոր Օր, Սուրբա եւն.) եւ ձեռնարկ Մանտալեան (Հայրենիք), որոնց դէմ նոր պրակ մը հանեց Հ. Արմէն «Քննադատները ջղախալ» յայտարարութեամբ:

Այո՛, բարեկամ, եւ ի՞նչպէս չըզայնաւան երբ արհամարհելով ազգի մը կրօնական խոր համոզումը յանդգնութեամբ շորքել կ'ուզես լուսապսակը՝ Գաղափարի եւ Ազատութեան ախոյեան Ղեւոնդի մակտէն, խոռվարար ու ջղապար որակելով զինքը եւ կարծես տխարներու կոյր հօտի մը նմանցնելով անոր հետեւող Հայ կղերը, Հայ բանակը եւ ամբողջ Հայ ժողովուրդը:

Ո՛չ, պարո՛ն: Ղեւոնդ աստուածային ոգի մը ունէր եւ ամէնէն խոր եւ սրտես ֆաղափագիտութիւնը: Նա ժառանգն էր այն մեծ շինարար ու ֆաղափագէտ Ներսէսին՝ որ կ'օրհնէր հայ սուրբ եւ Նպատի բարձունքին բազկատարած կ'աղօթէր Զիրաւի մէջ մարտնչող հայ բանակի յաղթանակին համար:

Ղեւոնդ աշակերտն էր մեծն Սահակի, որուն բարձր ֆաղափագիտութիւնը կ'ապշեցնէ մեզ՝ յաւիտեանապէս դատապարտելով մեր կոյր եւ տխար իշխանները, որոնք հակառակ իր խրատին, հակառակ իր գուրգուրանքին հայ արքային եւ հայ քաղաքին ու անկախութեան վրայ, մատնեցին, կործանեցին մեր գահն ու անկախութիւնը:

Ու Հայաստան մնաց որք եւ անտէր: Հոյակապ հորեմացի մը պէտք էր որ լայ եւ ողբայ այդ բշտառութիւնը:

Եւ այդ բշտառութիւնը իր ծայրագոյն վիճակին հասցնելու համար նենգաւոր Յակոբքան յարձակեցաւ մեր հայրենիքի յետին պատուարներն ալ խորտակելու՝ կրօնքը եւ խղիւղի ազատութիւնը:

Ահա Հայ ազգին, Հայ եկեղեցւոյ ահաւոր նգնաժամը:

Եւ անբաժնի սկսեւ էր արդէն:

Կրնա՞ր Ղեւոնդ սառնասիրտ մնալ երբ հայ եկեղեցիներ կը կործանէին ու սրբութիւններ կը պղծուէին:

Մենք ալ «արժան եւ իրաւ» կը գոչենք՝ երբ Ղեւոնդ ու իր ամբողջ մեր սրբութիւնները պղծողներուն գլուխները կը խորտակեն:

Արդար չէ Պրն. Հրանդ Արմէն երբ պատմական փաստերն հաւատարմութեամբ չի ներկայացներ: Յակոբքանի յետակոչումները «կեղծ» են եւ «լիբր» կ'աղաղակեն Եղիշէ եւ Փարպեցի. ինչո՞ւ հակառակը պնդել. ի՞նչ նպատակով:

R. Grousset փրանսացի պատմագէտը անկախօրէն կը վնոէ քէ «Վասակ արժանի է մատնիչ մեղադրանքին՝ գոր իրեն դէմ կ'արձակեն Եղիշէ եւ Ղազար, պառակտած ըլլալուն համար՝ գերագոյն ժամուն՝ հայ բանակները»:

Թողունք որ մատնիչ Վասակը Աստուծոյ եւ Հայրենիքի անէծքով տոչորի: Ան ամբողջ ազգ մը լացուց, արժանի չէ կարեկցութեան: «Երանի՛ քէ ծնած չըլլար» միայն կարելի է ըսել անոր, ինչպէս ըսաւ Փրկիչը մատնիչ Յուդայի համար:

Բայց Ղեւոնդ, մեծն Ներսէսի եւ մեծն Սահակի հոգին ու մարմնացումը, գերագոյն աստիճանով աստուածասէր է ու հայրենասէր եւ ազատասէր. այդ երբեակ սէրերովն էր որ հրդեհեց նա հայ աշխարհը եւ գայն տարաւ մինչեւ Արտագ ու իր ֆաշերուն եւ իր արիւնով փրկեց եւ հաւատք, եւ խիղճ եւ հայրենիք եւ ազգի պատիւ:

Օրհնեալ ըլլայ ան բոլոր հայ սրտերու մէջ եւ բոլոր հայ շրջներու վրայ առ յաւիտ, ինքն ու իր հետեւորդ լուսապսակ բոլոր նահատակները, Հայ ազգին փրկութեան ախոյեանները:

ԽՄԲ.

Ա Պ Ր Ո Յ Ե Ա Ն Գ Ե Ր Դ Ա Ս Տ Ա Ն Ը

ԱՍՏԱՎԵՊ ստէպ առիթ գտած է Ապրոյեան տոհմին վրայ զրելու¹. Ներկայ յօդուածիս պատճառը կու տայ ճարտարապետ Ս. Ճէվահիրի 1952 սեպտ. 5-ի մէկ նամակը, ուր կը հաղորդէր թէ Լուզանի քաղաքապետութիւնը որոշած ըլլալով ընդարձակ վարժարան մը կառուցանելու ճանապարհը գերեզմանոցի հողին քաղքին նախկին գերեզմանոցի հողին վրայ, կը յայտնուի 1857-ին կանգնուած Ապրոյ գերեզմանին մէկ քանի անգամ. ներուն շիրիմը: «Գոթական ոճով, մասամբ աւերուած, բայց գեղեցիկ յուշարձան մ'է, կը զրէ, և շատ լաւ վիճակի մէջ մնացած է ընտանեկան զինանշանը՝ թագաւորական թագով. և կը պատկերացնէ գաւառական թագով. և կը պատկերացնէ երկու առիւծներու միջեւ նոյեան աղանին՝ ձիթենիի ճիւղը կտուցին: Յիշատակարանն վրայ արձանագրուած անուններն են».

Abraham Abro 1857

Pierre Abro 1857

Raphael-Charles Abro 1867

Arakel-Pierre Abro mort à Gondar en Abyssinie 1875

Marie Therèse Abro 1889

Ճարտ. Ճէվահիրի խնամքով լուսանկարուած այս Յուշարձանը կ'արտատպենք հաճոյքով, ինչպէս նաեւ նոյն ընտանիքի

անդամներէն ոմանց իւզաների զիմանկարներուն՝ նուիրուած Միարանութեանս իշխան Ասլան Ապրոյէ, որոնք յարգանքով կը պահուին Ս. Ղազարու թանգարանին մէջ, յիշեցնելով նոյն ընտանիքի համակրութիւնը:

Ճշտումներ մ'ալ ընելով մեր պատուական բարեկամ Յ. Քիրտեանի հրատարակած Ապրոյեան Գերեզմանի ճիւղագրութեան վրայ, կը յաւելունք նոյն տոհմին մեզի ծանօթ վերջին շառաւիղներուն ալ անունները, տալով ոմանց կենսագրական տեղեկութիւնները, թէեւ անոնք անծանօթ մնացած չըլլան Վահան Զարդարեանէ և ուրիշներէ²:

Հուսկ կը զետեղենք Ապրոյեան ընտանիքի սեփական Աստուածաշունչի Յիշատակարանը, որ մանրամասնութիւններ կը բովանդակէ 1688-ին Չմիւնիոյ երկրաշարժին և Մատթէոս Ապրոյի վրայ, Աստուածաշունչը գրուած է «ի թուականիս Հայոց Ռ.Ղ.Ձ. = 1647-ին ի կ. Պոլիս, իւրովի Յակոբ սարկաւազէ, զարդարուած բազմաթիւ մանրանկարներով, և կրնայ նկատուիլ գեղարուեստական տեսակէտով՝ կ. Պոլսոյ զարդին հայ մանրանկարչութեան լաւագոյն ներկայացուցիչը: Չքնաղ գործը վանքիս Մատենադարանին նուիրուած է իշխան Ասլան Ապրոյէ 1923-ին³:

1. Բարերար արուեստագէտ մը. Հ. Կիրիկ Գեղարեան. Բզմվ. 1918, էջ 86.

Բագրատունի Ուսմանի Ս. Ապրոյ. Հ. Սահակ Տէր Մովսէսեան. Բզմվ. 1919, էջ 108.

Բագրատունի Ուսմանի Ս. Ապրոյ իշխանի ոսկերաց փոխադրութիւնը. Հ. Ղեւոնդ Տայեան. Բզմվ. 1932, էջ 345.

Ներքին Պուլկարահայ պատմութեան համար. Ապրոյ Զէւէպի. Յ. Քիրտեան. Բզմվ. 1925, էջ 258. 1926, էջ 37.

2. Վ. Զարդարեան. Յիշատակարան. կ. Պոլիս. 1910-13, էջ 269. Նոր Դար. Գահիրէ, 1940, էջ 1-3. Հմմտ. Չմիւնիոյ Պատմ. Հայոց Հա. Բ. Գլ. 39, էջ 411. Մատենա Աղաւնի. 1857, էջ 229.

3. Յիշեալ Զեւէպի, ինչպէս կը տեսնուի, ուր մտած ըլլալով վանքիս զրդերներուն հաւաքածոյին մէջ, բնականօրէն դուրս կը մնայ Հ. Բարսեղ Սարգիսեանի «Մայր ցուցակ»-էն: Բայց հետագային Հ. Եղիս Վ. Փէլիկեան զայն նկարագրած է «Բագմավէպ» 1935 տարւոյն Սեպտ.-Դեկտ. միացեալ բացատրիկին մէջ,